


«ԹՈՂ ՏՈՒԷՐ ՄԱՆԸ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՆԻ ԳԱՆ» : ՂՈՒԿ. ԺԸ. 16:

Հ Ա Տ Ո Ր Ե .

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ . ՍԵՊՏԵՄԲԵՐ 4 . 1876 .

Թիի 9



«ԵՐԿՈՒ ԿԱՆԱՅՔ ԶՈՒՐ ԿԸ ՔԱՇԵՆ ՇՈՐԷՆ»

ԿԵՆՒԱՆՆԻ ԶՈՒՐ

Վերի պատկերին մէջ կը տեսնուին երկու կանայք որ շուր կը քաշին հորէն: Զուրը պաղ, յստակ և քաղցր է, և կը կաշտի կենդանի շուր: Այս պատկերը մեր միտքը կը բերէ Սամարացի կինը որ իբր երկու հազար տարի առաջ շուր կը քաշէր հորէ մը և մեր Տէրն անոր բառ. «Հապա ան շուրը որ ես անոր պիտի տամ, պիտի ըլլայ անոր ներսի գին շուրի ազբիւր մը որ յաւիտենական կենաց համար կը բլթէ:»

ՅԱԿՈՒԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՆՆԸ

Ստենով Յակոբ անուն փոքր տղայ մը կար, որ շատ կարգացած էր ոգիներու և ուրուականներու վրայով և անոր փոքրիկ ուղեղը գրեթէ լեցուած էր այնպիսի բաներով: «Ոգի մը տեսնել կ'ուզեմ,» ըսաւ Յակոբ, և որ մը ոգի մը տեսաւ: Ոգին յանկարծ ելաւ Յակոբին դիմացը կայնեցաւ: Անոր դէմքը գեղին, կըտկի երկար, և քիթն աւելի երկար էր: Ոգին բարձրաձայն


ձիծ աղելով ըսաւ Յակոբին. «Միրեխա, ահա անտուկ մը որ լեցուած է անուշեղէններով: Եթէ այս անուշեղէններէն մէկ հատ մը ուտես, թռչնոց և կենդանեաց լեզուներ կը հասկնաս և կրնաս անոնց կերպարանքը մանել և ձեն առնել: Բայց զոչ ոչ եղիւ որ չլընդատ, ապա թէ ոչ չես կրնար բու առջի մարմնոյդ դառնալ:» Յակոբ գոչեց. «Սրդարև այս իրական ոգի մ'է,» և ցատկեց դնաց անուշեղէններուն սրնաուկին նայեցաւ: Մնասկին մէջ կապոյտ, ծիրանեգոյն և մանիշակագոյն անուշեղէններ կային: Յակոբն անոնցմէ մէկը ճաշակեց, և տեսաւ որ շատ քաղցր էր: Եւ ուրախութեամբ գոչեց. «Ո՛ր, կ'ուզեմ արագիլ մը ըլլալ, նման այն արագիլին զոր գրքես մէջ տեսայ:» Եւ ահա անոր սրունքները բարակցան, և երկար և կարմիր սրունքներ եղան: Անոր ազուր կաշիէ կօշիկները կարճ ոտքերու փոխուեցան, բազուկները թիկեր եղան, անոր պարանոցն իբր կէս կանդուն երկարեցաւ, մազերը կախուղ փետուրներ եղան և բոլոր մարմինը ծածկեցին: Հեռուն երկու արագիլ տեսաւ, որ իրենց փետուրները կ'ողորկէին, և ելաւ անոնց բովը դնաց: Երկու արագիլներէն մին ըսաւ նորեկին. «Նոր պարի մը վարժութիւն կ'ընենք, այս երեկոյ հանդէսի մը հրաւիրուած ենք:» Եւ սկսաւ գաշտին մէջ վեր վար քայլել սիգաճճմ գնացքով: Իսկ երկրորդը մէկ ոտքին վրայ հաւասարակշիռ կեցաւ վայելչութեամբ թեւերն իրարու զարնելով: Յակոբ մտացաւ ոգիին պատուէրը, և արագիլներուն այս ծաղրական և պարզամտ ընթացքին վրայ սկսաւ բարձր ձայնով ձիծ աղիլ: Նոյն միջոցին ուրիշ հեղինական ձայն մ'ալ լսեց որ կը-

սէր. «Հա՛, հա՛, հա՛.» Երկու արագիւնները թռան և դաշտին վրայէն գացին : Յակոբ շատ վախնալով չորս կողմը նայեցաւ, և սրովհետեւ գիշերը մտայնած էր, խորհեցաւ տուն դառնալ. Յանկարծ յիշեց թէ խնդացած էր, և չէր կրնար իր առջի կերպարանքն առնել, և կ'ըսէր «Երանի թէ այն ողին տեսած չըլլայի.» Այն տեղ Յակոբին մտաւ բու մը գետնին վրայ նստած էր : Բուն հարցուց Յակոբին . «Ի՞նչ է այն, պարոն արագիւ, ի՞նչ բան եկաւ գլուխդ.» Յակոբ դարձաւ տեսաւ որ իր հետը խօսողը խոշոր աչուի, կերկերածայն և կորակտուց բու մըն է : Յակոբ դառնապէս բողոքելով ըսաւ . «Ես խեղճ աղէկ մըն եմ, և չարածի ոգի մը զիս այսպէս փոխեց, և չեմ կրնար իմ առջի մարմնոյս դառնալ.» Բայց ողին անգիտէ բարձրաձայն կը խնդար դուշելով . «Հա՛, հա՛, հա՛.» Բուն ըսաւ աւնոր. «Կըցաւ իմ որ չեմ կրնար քեզ օգնութիւն մը ընել, վասն զի մինչդեռ արեւ կայ, իմ աչքերս չեն դուր տեսնել.» Յակոբ ըսաւ . «Ուրեմն, կրնաս ինձ օգնել, երբ լուսինն ելլէ.» «Այո.» ըսաւ բուն, «կրնամ օգնել քեզ, եթէ փոքր թունոյ մը փոխուիս, երեկոյեան ընթրիքի համար զքեզ ուտելով կրնամ քեզ օգնել.» Յակոբ սաստիկ վախնալով հեռացաւ անգութ բուէն, և սկսաւ ինքնին ըսել . «Ո՛հ, հայրս և մայրս հիմա պարտեղին մէջ, անտառին մէջ զիս կը փնտռեն : Ես ալ զանոնք պիտի կատարեմ : Ո՛հ, ես շատ թշուառ մէկն եմ.»

Յակոբ այս միջոցին աչքերը սրբելով և ախար կերպով նայելով ելաւ դաշտին վրայ նստաւ, և տեսաւ որ հոն քունը տարած է և տեսածն ալ երազ է : Անոր այնպէս կու գար թէ ոգիին «Հա՛, հա՛, հա՛» կանչելուն ձայնը ըսած էր : Բայց այն ձայնը թուրթուրէ մը ձայնն էր, որ մերձակայ տունէ մը փախած էր և կը խնդար այնպէս, ինչպէս անոր սորվեցուցած էին :

Յակոբ շուտով վազեց տուն դնաց և հոն հասաւ ճիշտ ընթրիքի ստեն : Շատ ուրախ եղաւ որ երազ էր տեսածը, և ոչ իրական ոգի : Անտառին մէջէն անցած ատեն թուրթուրէ «Հա՛, հա՛, հա՛» կանչելը կը լսէր, և շատ ուրախ կ'ըլլար որ ողիններն առասպելաց դրբերու մէջ միայն կան և ոչ ուրիշ տեղ :


Յակոբին և ողին այս պատմութիւնը միթէ մեր ընթերցողաց չի սորվեցներ թէ աղէկ է անոնց համար ըլլալ այնպէս, ինչպէս Աստուած ստեղծած է զանոնք, և գոհ ըլլալ այն վիճակէն յորում Աստուած դրած է զանոնք :



ԱՌԱՋԻՆ ՄԵՔԵՆԱՆ

ՅՆՅՈՏԻՆԵՐԸ ԼՈՒՍԼ

Երբ ցնցոտիները մանր մանր կտորներ կ'ըլլան, լուացուելու առաջին մեքենային մէջ կը դրուին : Յիշեալ մեքենան մեծ տաշտ մըն է ջրով լեցուն, և ունի մեծ զլան մը որ արագ կը դառնայ ջուրին մէջ : Գլուներն երկաթէ ակուններ ունի, այն ակուններով կը բռնէ ցնցոտիներու մանր կտորներն և շուտով զանոնք աւելի մանր կտորներու կը բաժնէ : Նոյն միջոցին միշտ մաքուր ջուր կը վազէ այն մեքենային մէջ որ ցնցոտիները կը լուայ : Ազոտա ջուրը մեքենայէն դուրս կ'ելլէ միւս ծայրէն ուր կայ խողովակ մը, որ մետաղեայ թելերէ հիւսուած քամոց մը ունի արդեւելու ցնցոտիներու կտորները որ խողովակէն դուրս չելլեն : Երբ ցնցոտիներու կտորներն աղէկ մը կը լուացուին, ուրիշ խողովակի մը միջոցաւ կը վազեն ուրիշ տաշտի մը մէջ ուր տեսակ մը խառնուրդ կայ որ շատ դէշ կը հատի : Յիշեալ խառնուրդն արդարեւ շատ կը ճերմկեցնէ ցնցոտիներու կտորները : Ցնցոտիներն իբր 24 ժամ յիշեալ խառնուր-



ԵՐԿՐՈՐԻ ՄԵՔԵՆԱՆ

դին մէջ մնալէ ետքը կը դրուին լուացուելու երկրորդ մեքենային մէջ, որ շատ նման է առաջին մեքենային, միայն թէ այս վերջնոյն ակուններն աւելի փոքր և աւելի ուր բն, և մեծ զլանն աւելի արագ կը դառնայ այս մեքենային մէջ : Այս մեքենան ցնցոտիներուն վրայէն կը

լուայ կը հանէ վերը յիշուած սպիտակացուցիչ խառնուրդը և, և ջրնցոտիները մանր թելեր ընելով կը խառնէ ջուրին հետ այնպէս որ բոլոր զանգուածը ջուրի և ախարի նրման կ'ըլլայ : Այն զանգուածին մէջ մանր ցնցոտի մը իսկ չէր կրնար տեսնել : Ցնցոտիներն այս վերջին փոփոխութենէն ետքն ալ պատրաստ կ'ըլլան թուղթ շինուելու :

ՃԱՆՃԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Ժամանակաւ Սկոտլանդի մէջ չար մարդ մը կար որ դինետուն մը կը բանեցնէր : Այս մարդը միտքը դրած էր քարոզ կամ աղօթք բնաւ չըսել : Բայց կիրակի օր մը ուղեց եկեղեցի երթալնուազերգութիւն մտիկ ընելու : Նուազերգութեան մտիկ ըրաւ, իսկ երբ քարոզինն ոտքի ելաւ աղօթելու, դինեպանը ձեռքերով աւանջները խցեց և աղօթքէն խօսք մը անգամ չլսեց : Երբ քարոզիչը քարոզել սկսաւ, դինեպանը դարձեալ խցեց ականջները քարոզն ալ չլսելու : Մինչդեռ նա մատերն ականջները խօթած էր, ճանձ մը եկաւ անոր քթին վրայ նստաւ : Մարդը ջանաց ճանձը քթէն վռնաւ առանց մատները ականջներէն հանելու, բայց չկրցաւ : Վերջապէս ճանձն այնչափ մարմնացեց զինեպանին քիթը, որ նա ստիպուեցաւ մէկ ձեռքն ականջէն դուրս հանել ճանձը քթէն վռնաւելու : Այն ատեն որ մարդը մէկ ձեռքովը քթէն ճանձը վռնաւելաւ կ'աշխատէր, լսեց քարոզիչը որ կ'ըսէր. «Ան որ լսելու ականջ ունի, թող լսէ.» Գինեպանը մէկ ականջովը լսեց այս խօսքը, և անոր ուշադրութիւնն արթնեցաւ, ուստի մէկէն չդոցեց իր ականջը : Քիչ մը ետքը քարոզիչը ուրիշ խօսք մը ևս ըսաւ, և դինեպանն անկէ ալ ազգուելով միւս ձեռքն ևս ականջէն վար առաւ, և միւս անգամ ականջները չդոցեց, այլ բոլոր քարոզը մտիկ ըրաւ : Այն քարոզին ազգեցութեամբ յիշեալ մարդն աստուածափախ և Սուրբ գիրք սիրող մարդ մը եղաւ :

Արդ այս մարդուն փրկութիւնը փոքր ճանձի մը միջոցաւ եղաւ : Անտարակայ ճանձը չէր գիտեր թէ ինչ կ'ընէր, բայց յամառ մարդուն ձեռքերն ականջներէն վար առնելու և անոր Աւետարանը լսելուն պատճառ եղաւ : Դուք ալ երբէք այսչափ մեծ բան մը ըրած էք : Միթէ երբէք ջանացած էք տղայ մը կամ աղջիկ մը համոզելու որ Աւետարանին լսէ :

ԲԱՐԻ ՎԱՐՔ


Բարի աղայ մը դպրոցի մը մէջ շատ աւելի բարեբ կ'ընէ քան որ ինքը գիտէ: Հարկ չէ մեզ ըսել թէ որչափ բարի ազդեցութիւն կ'ունենան այնպիսոյն վարքը, խօսքերն, անկեղծ աղօթքներն և օրինակը, բայց աղէկ է խորհիլ այս բանին վրայ: Շատ անգամ խորհելով թէ բարի աղայ մը դպրոցին մէջ որչափ օգտակար ազդեցութիւն կ'ունենայ, փափաք մը կ'արթննայ մեր ներսիդին, և կ'ըսենք.

«Ո՛հ, եթէ կարելի ըլլար վերստին ձեռք բերել մեր մանկութեան օրերը, պիտի ջանայինք բոլորովին անբիծ կեանք մը վարել: Հեղինակ մը Անգղիոյ մէջ Տոգ. Արնոլտի Բըկպիի դպրոցին վրայ խօսելով կ'ըսէ թէ, այն դպրոցին մէջ երևան եկած կրօնական արգիւնքը միայն Տոգ. Արնոլտի ազդեցութենէն չէին, այլ դպրոցի աշակերտներէն մին, Սեֆնսըր Թօրթըն, այս մասին շատ օգնած էր վարժապետին: Տոգ. Արնոլտ այն տղուն համար «Դպրոցին օրհնութիւն մըն էր», կ'ըսէ: Օր մը Տոգ. Արնոլտ այն տղուն ծնողացն այսպէս գրեց.

«Չեր որդին այնչափ օգուտ ըրաւ դպրոցին որ կարելի չէ հաշուել:» Այն տղան բարեպաշտ, արգար, ուղիղ, ազնուամիտ, անյողդողդ, հեղահամբոյր և համեստութեան արպար մըն էր: Առանց անոնց զգացնելու կը խրատէր աղաքը որ ամէնան մոլութենէն, և փափաքող ըլլան բարի խղճի և ուղղութեան:

Այն որ կը գործէ, և լիութեամբ ունի ամէն բան, լաւագոյն է քան զայն որ կը պարծենայ և հացի կարօտութիւն կը քաշէ:

Եթէ հարստութիւնը փափաքելի բան է, այս աշխարհիս մէջ ի՞նչ մեծ հարստութիւն կայ քան զիմաստութիւն որ ամէն բան յառաջ կը բերէ:



«ԱՌԻՒՇ ՍԵՌԵԼ ԿԵՐԱՅ ԶԷՐ»

ՍՈՒՐԲ ԳԻՐԳ ԿԱՐԴԱՅՈՂ ՓՈՒՐ ՏՂՈՅ ՀԱՄԱՐ ՊՍԿԿԵՐ ՄԸ

Վերի պատկերը կը ցուցնէ դէպք մը որ աւելի քան 2,500 տարի առաջ տեղի ունեցաւ: Այս դէպքին պատմութիւնը Սուրբ Գրոց մէջ յիշուած է: Արգ, աղաք, մարերնիդ բերէք Սուրբ Գրոց բոլոր պատմութիւնները, և դատեք թէ անոնցմէ ո՞րը կը յարմարի այս պատկերին: Դժուար պիտի ջլլայ այն պատմութիւնը գտնել, վասն զի պատկերը շատ աղէկ կը ցուցնէ զայն:

ԱՆՀՆԱԶԱՆԳՈՒԹԻՒՆ

Մանկահասակ բարեկամներս, ձեզ դէպք մը պիտի պատմեմ, և կը կարծեմ թէ դուք այս դէպքը կարդալէն ետքն աւելի պիտի ընտրէք հնազանդիլ ձեր ծնողաց քան անոնց մտիկ չընել:

Քանի մը օր առաջ տիկին Մարիամ իր ինն տարեկան աղջկան պատուիրեց անէն դուրս չերթալ խաղալու: Աղջիկը, որ միշտ կ'ուզէր դուրս երթալ, խորհեցաւ թէ կրնայ երթալ

առանց մօրը դիտութեան: Ուստի օր մը գըլխարկը պատուհանէն վար նետեց, ինքն ալ անոր ետեւէն գնաց և վազելով կը խաղար: Աղջիկը մինչ այսպէս կը խաղար և կը զուարճանար, դէպ երկաթուղեաց կայարանը գնաց, և այն միջոցին բեռան կառաչու մը կուգար: Աղջիկը իր խաղովն այնչափ զբաղեալ էր որ կառաչուին դալը չիմացաւ: Երբ տեսաւ որ կառաչուն կուգայ, մէկէն աճապարեց փախչիլ, բայց ոտքը սահեցաւ, աղջիկը գետինն ինկաւ և անխնայէն մին անոր մէկ սրունքը գէշ կերպով կտրեց: Աղջիկը հիւանդանոց տարուեցաւ, և հոն հասկցուեցաւ թէ անոր սրունքը շատ դէշ կերպով փխտուած էր, ուստի հարկ եղաւ զայն կտրել:

Արգ, սիրելի բարեկամներս, այն աղջիկը միայն մէկ ոտքով մնաց. վասն զի անհնազանդ գտնուեցաւ իր մօրը:

«ԻՄ ՀՕՐԱ ՕՐԸ»

Օր մը լսեցի որ երկու աղայք, Յակոբ և Կարապետ, հետեւեալ կերպով կը խօսակցէին: Յակոբ ըսաւ իր ընկերին. «Կարապետ, երեքշաբթի օրը մի գար, այլ կերակի օրն եկուր որ նաւակով գետին վրայ ի միասին պատելու երթանք: Լսեցիր. երեքշաբթի օրը մի գար:»

Կարապետ ըսաւ. «Յակոբ, ինչո՞ւ չես ուզեր որ երեքշաբթի օրը գամ:» Յակոբ անոր պատասխանեց. «Չեմ ուզեր որ երեքշաբթի օրը գաս, վասն զի այն օրն ես հայրս տեսնելու կ'երթամ: Գիտես որ հայրս ամուսնացեալ եղբօրս տունը կը բնակի, և ես բարեկամ մը ունիմ որ շուկայ կ'երթայ այն կողմը, և ամէն երեքշաբթի օր զիս իր հետը կը տանի և ես կը բերէ: Չեմ ուզեր որ ինչ և իցէ պատճառ մը զիս արդէլ այն օրն երթալ հայրս տեսնելէ:» Կարա-

պետ ըստ . « Յակօբ , աղէկ է հայրդ տեսնելու երթալ , բայց ես կը կարծեմ որ այդպէս ընելով դուն շատ ժամանակ կը կորսնցնես : »

« Օ՛հ , հոգս չէ . » ըստ Յակօբ , « ուրիշ օրեր աւելի աշխատելով կը լեցնեմ պարապ անցուցած ժամանակս : »

« Բայց » ըստ Կարապետ , « ի՞նչու կիրակի օր չես երթար հայրդ տեսնելու : » « Վասն զի , » ըստ Յակօբ , « եղբայրս բարեպաշտ է , չուզեր որ ես կիրակի օրը ճամբորդութիւն ընեմ , և սրովհետեւ եղբայրս մեր հիւանդ հայրը կը խնամէ , ես ալ չեմ ուզեր անոր սիրալը վշտացնել և խօսքը կտրել : Բայց , ինչպէս ըսի քեզի , դուն կիրակի օրն եկար է միասին նաւարկենք դեռին վրայ : »

Այս միջոցին , յանկարծ խորհուրդ մը ծագեցաւ Կարապետին մարին մէջ , և Կարապետ Յակօբին ըստ . « Կիրակին ալ է՞ Հօրս օրն է : Այն օրն ես Հօրս առնը կ'երթամ զայն տեսնելու : Որեւէ պատճառով մը ետ մնալ չեմ ուզեր , ուստի այն օրը պարապ տեղը ինձի մի սպասեր զուարճութեան երթալու : Ուրիշ օրեր աւելի աշխատել կ'ուզեմ , որպէս զի կիրակի օրը կարենամ Հայրս տեսնելու երթալ : »

« Միրելի բարեկամ , » ըստ Յակօբ ամօթահար , « շատ աղէկ յիշեցիր ադ . ես առաջ չխորհեցայ , բայց հիմա կը տեսնեմ որ դուն իրաւունք ունիս այդպէս ըսելու : կիրակին մեր երկնաւոր Հօրն օրն է : »

« Այո , » ըստ Կարապետ , « որովհետեւ մեր երկնաւոր Հայրն է , որ մեզ կը պարգևէ մեր բոլոր օրերը , մենք ալ պարապ ենք եօթն օրուան մէջ օր մը անոր պաշտաման և ծառայութեան նուիրելու : »

ԱՆՅԵԱԼ ԱՄՍՈՒԱՆ ՀԱՐՑՄԱՆՅ ՊԱՏԱՍԻԱՆ

Այն մարդիկ , որ մեռնելու համար իրենց առններուն մէջ կ'սղբային , Եզրիպտացիք էին : Անոնց անդրանիկ զաւակաց մահն Աստուծոյ կողմէն զրկուած պատիժ մըն էր , վասնզի Փարաւոն չթողուց որ Խորայէլացիները գերութեան լուծէն ազատին : Եւ ժի :



ՎԱՅՐԵՆԻ ԿԱՏՈՒՆ ԿԱՏՈՒՆ ԵՒ ՇՈՒՆԸ

Ճերմակով խառն սև և գեղեցիկ կատու մը կար , որ քով սրսորդ էր մկանց , նաև ճնճղկանց որ կը համարձակէին իրենց բոյները շինել աւոր բնակած տանը մօտ : Կատուն գրեթէ միշտ պատեհ առթի կը սպասէր անոնց վրայ նետուելու և զանոնք բռնելու : Այս կատուն իր սղբ տիկութենէն ի վեր բնաւ նախանձօրդ ունեցած չէր ասն մէջ , բայց , ինչպէս անոր փոքրիկ տիրուհին կ'ըսէր , աղէկ էր որ ան այսպէս մինակ մնացած էր , վասն զի եթէ օտար կատու մը պարտեղը մանէր , կամ շուն մը դռնէն ներս վազէր , վայրենիի պէս անոնց վրայ կը դիմէր , կարծես թէ իրմէ զատ աշխարհի վրայ կենդանի մնալու չէր : Միթէ այս կատուն չէր որ ջանացած էր սպաննել այն անմեղ գեղձանիկն որ մեծ սրահին մէջ էր : Անոր այսպէս ջանալը կը ցուցնէ անոր ինչ դաժան և վայրենի բնաւորութեան տէր ըլլալը : Կատուն համար մեծ ցաւ էր որ անոր թող չէր արուեր մեծ սրահէն ներս մտնել . վասն զի օր մը սեղանին վրայ ելած և պատրաստուած էր գեղձանիկին վանդակին վրայ նետուելու : Երազի պէս կուգային անոր այն գեղեցիկ սրահն և խաղերը որ յաճախ խաղցած էր հոն վայրուն դնտակ մը գլորելով և սեղաններուն և ամսուներուն ստըբուն բոլորտիքը վազելով : Բայց սրովհետեւ հիմա մեծ սրահին դուռը բնաւ բաց չէր գտնուեր , և անոր տիրուհին անգամ երբ զայն սանդուխին վրայ տեսնէր , վար կը հրէր , ի հարկէ դահացած էր ուրիշ տեղ վայելած ազատութեամբ : Կատուն երբ որսորդութեան պարապած ըլլար , իր մուշտակը , մանաւանդ թէ ճերմակ կուրծքը մարբելով կը զբաղէր : Տունը եկող հիւրերն և ուրիշները յա-

տուկ կը տեսնէին կատուն և անոր տիրուհուն կը գովէին անոր գեղեցկութիւնը : Այս պատճառաւ կատուն ալ իր մուշտակը միշտ վայրուն կը պահէր : Մանաւանդ մուկ որսալէն ետքն անոր մուշտակը տակն ու վրայ կ'ըլլար և կատուն շատ հոգ կը տանէր մուշտակը շտկելու : Հիմա կրնաք հասկնալ թէ որչափ մեծ եղաւ կատուն զարմանքն երբ օր մը տեսաւ որ իր սենեկին մէջ մեծ շուն մը կայ : Մէկէն կատուն արիւնը դուրսը ցատկեց , և թէև ուռեցաւ և Ֆլաց և կատաղութեամբ նայեցաւ , ու պաշտ ցախաւելի կոթի պէս տընկեց , սակայն չկրցաւ շան վրայ ագրեցութիւն բանեցնել : Կ'երի թէ շունը կատուներու և անոնց բնաւորութեանը վարժուած էր , վասն զի աչքին մէկ ծայրովը միայն նայեցաւ կատուն , ետքը երկու աչքերն ալ փակելով բերանը բացաւ , և յօրանջեց այնպէս որ կատուն անոր սկռաները տեսնելով ստակաց : Խեղճ կատուն այնուհետեւ գրեթէ թշուառ եղաւ , վասն զի չէր կրնար իւր սովորութեանը համեմատ իր մուշտակը մարբել այն անկիւնն ուր հիմա շունը պառկած էր , բայց քանի մը օր ետքը կատուն միտքը ուրիշ խորհուրդ մը ինկաւ : Կատուն տեսնելով թէ շան դէմ խտտութիւն բանեցնել օգուտ չըներ , պատեհ առթի սպասեց , և երբ տեսաւ որ շունը յարգին վրայ կ'ծկոտեցաւ պառկեցաւ , գնաց անոր կռնակն ելաւ , և սկսաւ իր սպիտակ կուրծքը մարբել , և թաթերովն երեսը լուալ որպէս թէ հոն շուն չկար : Այնուհետեւ կատուն պաշտ թաթերուն շրս կողմն ամփոփեց և սկսաւ թշնամոյն կռնակին վրայ քնանալ : Այսպէս ցուցնել կ'ուզէր թէ այնպիսի թշնամի մը կ'արհամարհէր , կամ թէ միտքը դրած էր սիրով ապրիլ այն ապուշ վայրենիին հետ : Եունն ի՞նչ խորհեցաւ կամ ի՞նչ զգաց : Բան չըսաւ , այլ հանդարտ քնացաւ , և կատուն ալ թէ այն օրը և թէ ուրիշ շատ օրեր շանը կռնակը պառկեցաւ :

Ամերիկայի միսիոնարաց ընկերութեան կողմէն
Խմբագիր Ժ. Ք. ԿԻԻՆ
Ֆիլանսնթրաք Խոզուո , Ամերիկան իսան

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ
Չազմագնթար , Յակոբեան խան , Թիւ 12 .